ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ*

Նորահիրաշ պրսակավոր և զորագլուխ կտրիճներուն,
Արիաբար դեմ դրիր մահվան՝ սպառազինված սուրովն Հոգվույն,
ՎԱՐԴԱՆ, քաջ նահատակ, զի թշնամին վանեցիր դուն,
Եկեղեցին պրսակելով քու արյունովդ վարդագույն:

Երկնային զենքովն հաղթող դուրս եկար դուն պատերազմեն,
Խռնական իմաստությամբ յոռնեմացած անճառորեն,
Անունով հանչված բարի խորհրդականդ, ո՞վ ԽՈՐԵՆ,
Վկան ըլլալով Խաչեցյային՝ արյունիդ պսակն առիր իրմեն:

Ընական հույսով լեցված կորովասիրտն ու քաջն ԱՐՏԱԿ,
Բոսորաբուխ աղբերակին մեջ թաթավված կարմիր համակ,
Իր արյունով մրկրտվելով՝ ըմպեց այսպես փրկող բաժակն
Ու դասակից հրեշտակներուն՝ Երրորդության երգեց նա փառք:

Սրբափայլ զգեստով պճնված հանդիսադրեն աստվածային,
Եվ զորացած Երրորդությամբ՝ քանդեց բերդերը բանսարկվին,
ՀՄԱՅԱԿՆ, Հոր ընծայված, շարշարակից Որդվույն բնավին,
Հաղթեց Հոգվով պատերազմին ու շարասեր խռխտ արքային:

---

* *Առանձին հանձնարարությամբ հրատարակում ենք Ս. Ներսես Շնորհալի հայրապետի Վարդանանց հիշատակին գրած «Նորահրաշ պսակաւոր» շարականի աշխարհաբար թարգմանությունը, կատարված ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքի կողմից, որը միաժամանակ Ղևոնդյանց ոգին և Վարդանանց հայրենասիրությունը ունեցող հոգևորական է, և որի ծննդյան 80-ամյակը և գրական-վարչական գործունեության 60-ամյակն է տոնվում այս օրերին։— ԽՄԲ.*

Էական բարիին դեմ՝ սպառազինված դեմ մեղքերուն,
Պարակցելով զվարթուններուն վերելքով մը երկինք՝ հեռուն,
ՏԱՃԱՐՏ զարմանալի, Աստծո տաճարը դարձար դուն.
Եվ տերունյան սուրբ խորհուրդին արժանավոր տեղի և տուն:

Սուրբ զբաղովն հույսին ծածկված և հավատքին սացած վանանն,
Ու փրկարար իբր սաղավարտ գլուխը դրած խաչի նշանն,
Նոր մանկությամբ հանատակված, կերպարանքովը վեհ՝ ՎԱՀԱՆՆ
Իր արյունով պրսակվեցավ՝ Խաչեցյալին իբրև վրկան:

Իբրև նվեր ինքնամատույց՝ անուշահոտ կիզմամբ բոլոր,
Եվ բանավոր իբր պատարագ ընծայեց զինքն երկնավոր Հոր,
ԱՐՍԵՆ այն ցանկալի, արդարությամբ հոխ ու հրզոր,
Հոգվույն շնորհքեն յոթնարփենի իմաստությամբ շրքեղավոր:

Երկու եղբայրներով հարազատ՝ հույժ ընտիր՝ անգին՝
Առաջ անցավ բոլորեն՝ իբր մարտիրոսաց գլուխն ու վերջին,
Նախաշավիղ բարի գործոց հառաջընթացն այն ԳԱՐԵԳԻՆ,
Ընդունելով բրբաբիոնն՝ որ բալիշն է հանատակին:

Բամն ամբողջ՝ իբր հանատակ՝ իրենց թիվով ՀԱԶԱՐ ԵՐՍՈՒՆ
Եվ վեց, ինկան արիական մարտնչումով հետ ԻՆՆԵՐՈՒՆ,
Իբր նորոգում եկեղեցվույն՝ թափեցին հոն իրենց արյունն,
Երկնավոր հանդիսադրեն անքառամ պսակն առած սիրուն:

Գոհությամբ փառքի երգեր կնվագենք, Տե՛ր, Քեզի համար,
Զմեզ շուրջպատող այս քաջերու պսակվածներովը անհամար՝
Հայաստանյայց եկեղեցին զարդարվեցավ պայծառաբար,
Ունենալով մարտական նիզն անոնց՝ մեզի բարեխոս հար:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ